



ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻ ՔՈՒՄ

ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ, — Գիտությունների ակադեմիայի
նախագահ՝ Վ. Համբարձումյանի նախագահությամբ
տեղի ունեցած Հայկական ՍՍՌ Գիտությունների ակա-
դեմիայի տարեկան ընդհանուր ժողովը:

Նախագահի ներածական խոսքից հետո կենսարա-
նական գիտությունների ակադեմիկոս-քարտուղար Վ.
Գուլբանյանը ամփոփեց անցած տարվա Ակադեմիայի
բոլոր բաժնեմունքների գործունեության տվյալները:

Հաշվետու շրջանում Ակադեմիայի բոլոր բաժնե-
մունքները ճպան և լուծել Հայաստանի տնտեսության
և կրթուրայի հետագա վերելիք հետ կապված հրա-
տապ մի շարք հարցերու Հատուկ ուշագրություն է
նվիրված ֆիզիկո-մաթեմատիկական, քիմիական, երկ-
րարանական, տեխնիկական, կենսարանական և հա-
սարակական գիտություններին: Գիտական այդ բազ-
մապիսի աշխատառությունները մեկ կողմից ամուս հի-
մների վրա և դնում մեր ժողովրդի տնտեսությունը,
մյուս կողմից նպաստում են մեր երկրի հզորացմա-
նը:

Ակադեմիայի բոլոր բաժնեմունքներում տարված
գիտական աշխատանքները ծառայելու և մեր Հայ-
րենիքի հետագա հարածուն վերելիքին, որի շնորհիվ
բոլոր առաջնորդաց են ապրում մեր արտադրությունը,
տեխնիկան, գույղատնտեսությունը, բժշկությունը:

Արժեք անդրադառնալ նաև հայոց լեզվի մասնագետ-
ների կատարած շնորհակալ աշխատանքին հայոց
լեզվի ուսումնասիրության գործում: Մասնագետների
արենազան աշխատանքի շնորհիվ կազմով են Հայերե-
նիքի բարբառագիտության բարութեանը, մայրենի լեզ-
վի լիակատար քարտարան: Շուտով տպագրության
կշանձնվի արդի հայերենի բացարարական բառարա-
նի առաջին հաստորք: Պատրաստության մեջ են հայ-
ուսերեն բառարանը և հոմանիշների բառարանը:

Հայաստանի Գիտությունների ակադեմիան կապ է
պահպանում ավելի քան 30 երկրների շուրջ 200 գի-
տական հաստատությունների հետ, նրանց հետ ոմե-
նում է փորձի փոխանակում:

Հաշվետու շրջանում ստեղծվել են նոր ինստիտու-
տներ, ինչպես հոգերանության, ազգագրության և այլն,

Ակադեմիայի գիտական աշխատողների թիվը աճել է
459 մարդով: 70 գիտաշխատող ստացել են գիտու-
թյունների թենածուի և դոկտորի աստիճան:

Տեղի ունեցավ նաև Գիտությունների ակադեմիայի
իսկական և թղթակից անդամների ընտրությունն նոր
ակադեմիկոս ընտրվեցին Աշոտ Հովհաննեայանը, Ա-
րարատ Ղարիբյանը և Ա. Առաքելյանը:

ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅԵՐԻ ԱՐԺԵՔԱՎՈՐ ՆՎԵՐԻ.— Սովորա-
յի բնակիչ Ասատուր Պետրկանը, բուլղարահայի
«Երևան» մշակության միության միջոցով երևանի
Ար Մշանիկյանի անվան գրադարանին է նվիրել իր
անձնական նոխ գրադարանը՝ բաղկացած 500 ընտիր
գրքերից և 300 պարբերականներից ու կերպարվեստի
առանձին նյութերից: Արժեքավոր են հատկապես
Հայկապյան բառարանի երկհատորյակը (տպ.
1836—1837 թ. թ.), Հ. Դ. Ալիշանի «Միսուան»-ն ու
«Ալրարան»-ը (1885—1890 թ. թ.):

Նույնպիսի ազնիվ նախաձեռնություն էր հանդես
բերել նաև Մոսկվայում բնակվող Սերգեյ Տեր Մտե-
փանյանցը՝ կլասիկ գրականության իր գրքերի նվի-
րաւությամբ:

ԱՅՂՐ ԼՃԻ ԿԵՆԴԱՆԱԲՈՒԽԱԿԱՆ ՍՈՎԱՌՁԼ.— Մե-
ծամոր գետի ափերին, հայրու հեկատ տարածու-
թյամբ, ստեղծվել է ընդարձակ կենդանաբուծական
սովորություն: Այստեղ բուժվում են ճահճակուլքեր և ուն-
ճագարներ, որոնց մորթին արգեն սկսել է մեծ համ-
րավ համեր:

Սովորող իրենից ներկայացնում է շամբուանների,
լճակների մի անվերջ ցանց, փոլած Մեծամոր գետի
հոսանքն ի վար Հատուկ արգելանոցներում այստեղ
բուժվում են Հարավային Ամերիկայից բերված ճահ-
ճակուլքերը, որոնք շատ լավ են հարմարված իրենց
նոր հայրենիքներին: Շատ հարգի է նրանց մորթին, որն
ուղարկվում է լենինգրադի № 1 ֆարբիկային՝ վերա-
ցածվելու համար:

Ճահճակուլը մարդամոտ չէ: Դիմանում է կիմա-
յական փոփոխություններին, Գետնատարած ցածրա-
գիր բների միջով ամենուրեք հոսում են մանր արգեն-

տական առուներ, Նրանցում, մահրակրկիտ ուսումնասիրությանց իբրև արդյունք, ստեղծվել են բոլոր հնարավորությունները, բնականին հար և նման, որպեսզի ապահովեն ճահճակուղի համար կլանքի բոլոր ավանդները՝ կլանքի ապահովության և ցեղի բաշմացման տեսակետից: Այժմ նրանց թիվը հասնում է շահագույն ապահովագույն արտադրության է 2 200-ի, մոտ ապագայում ծրագրված է այդ թիվը բարձրացնել 20 000-ի:

Բացի կուղբերից սովորում բուժվում են նաև սև ճագարներ, որոնց մորթին նույնպես թանկ է գնահատվում: Նրանք էլ ունեն բոլոր տվյալները՝ կարճ ժամկետում մեծ եկամուռով տնտեսություն զարգացնելու: Ամուր հիմքերի վրա գնելու համար կենդանաբանական սովորող նրան կից ստեղծված են օժանդակ տնտեսություններ: Մուշտակի արտադրության է նվիրված նաև կիրովականի աղջևաբառութական սովորություն:

ՀԱԿՈՐ ՀՈՎՆԱԹԱՆՅԱՆԻ ՆԿԱՐՆԵՐԻ ՑՈՒՑԱՀԱՆ-ԴԵՍԸ ԵՐԵՎԱՆԻՒՄ: — Հայ արվեստի պատմության մեջ հայտնի է Հովնաթանյանների ընտանիքը: Հակոր Հովնաթանյանը անվանի նկարիչների սերնդի վերջին ներկայացուցիչն է, որի նկարների ցուցահանդեսը կազմակերպվեց վերջերս Երևանում:

Աշբառու են Հակորի գիմանկարները իրենց ռեալիստական նուրբ արվեստով: Նրանք բացի այն հանգամանքից, որ մեզ հասցել են պատմական կամ անհայտ որոշ մարդկանց դիմանկարները, նշանավոր են նրանով էլ, որ շատ նուրբ մի արվեստի միջոցով պահպանել են այդ շրջանի հագուստ-կապուստի վերաբերյալ տվյալներ: Այդ նկարները ունեն կատարման հաջողություն, գույների ճաշակավոր և ճիշտ ընտրություն, հոգեբանական պահի ընկալում և դրան ներդաշնակ շրջապատի մեջ տեղադրում, որի շնորհիվ ու մեկ դիմանկար չի կրնում յուրաքանչյուր:

ՀՌԱԶՅԱ ՔՈԶԱՐԻ ՄՆՆԴՅԱՆ 50-ԱՄՅԱԿԻ: — Լրացավ սովորական արձակագիր և հրապարակախոս Հրազյա Քոչարի ծննդյան հրատու տարին:

Քոչարը գրել է սկսել 1931 թվից: Այդ օրից էլ բոլորի համար պարզ էր, որ գործ ունեին մի գորդի հետ, որը գիտե խորհնել, վերլուծել, պատմականի մեջ գտնել մնայումը, արտաքինի մեջ բացահայտել ներքինը, առօրյայի մեջ նշմարել հավերժականը, Քոչարը ժամանակի հետ ապրող և ստեղծագործող գրող է: Գեղարվեստական գրականությունը նրա համար կյանքի ուսուցիչ է, բարերի դաստիարակման և ազնվացման միջոց, ժողովրդների եղբայրացման համուրը:

Հայրենական պատերազմից հետո սկսվում է Քոչարի ստեղծագործության ամենաեռուն շրջանը, երբ նա ավելի հաջողված գեղարվեստական, հրապարակախոսական և գրական-բնադրատական լավագույն երկեր ու հոգվածներ: Քոչարը ակնարկի և պատմվածքի խոշոր վարպետ է: Լավագույն պատմվածքներից են նրա «Գեներալի բույրը» և «Մայրը»:

Քոչարի գեղարվեստական ստեղծագործության պահին է կազմում սՄեծ տան զավակները՝ ծավալում վեպը, որն արդյուն ունեցել է մի քանի հրատարակություն:

Քոչարի գրչին են պատկանում «Մեծ տարեգրության էջերից» հրապարակախոսական հոդվածաշարը, «Հյուսիսային ծիածան» կինոփիլմի սցենարը, գրական-բնադրապատճեն բազմաթիվ արժեքավոր հոդվածներ:

ՌԱԴԻՈԲՐԱԴՈՒԱՅԻԱՅԻՆ ՆՎԻՐԱԿԱՆ ՍԵՄԻԱ: — Հայկական ՍՍԸ Գիտությունների ակադեմիայի Մագիստրուսության բաժանմունքը ամփոփեց իր անցած տարամ կատարած աշխատանքը, Զեկուցումով հանդես եկավ գոցնետ կ. Քյանդարյանը, որից հետո լսվեցին 20 տարբեր զեկուցումներ, նվիրված ռագիստրուությանի սահմաններում այժմեական հարցերի Զեկուցումից հետո տեղի ունեցավ՝ մաքրերի աշխատված փոխանակություն, որին մասնակցեցին պրոֆեսորներ թ. Ֆանարջյանը, Հ. Սաղաթելյանը, Ար Հակոբյանը և շատ ուրիշներ: Գիտական սեփայում լուսվեցին նաև ռենտգենուությանին, ուղիղությանի և օնդուրդիային նվիրված զեկուցումներ:

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ ՄԱՐԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՄՆՆԴՅԱՆ 60-ԱՄՅԱԿԻ: — Ապրիլի 29-ին լրացավ ճարտարապետ Մ. Գրիգորյանի ծննդյան 60 տարին: Այդ առթիվ Հայաստանի ճարտարապետների տանը տեղի ունեցավ մեծարանի երեկո:

Հոբելյանական երեկոն բաց արեց ճարտարապետ Վ. Հարությունյանը, որը հանգամանորն տանրացավ արվեստի վաստակավոր գործիչ ճարտարապետ Մ. Գրիգորյանի ներդրման վրա սովորական ճարտարապետության զարգացման գործում: «Հայպետնախափիծ» ինստիտուտի գիտեկուոր ճարտարապետն այդ օրույնը զեկուցեց Մ. Գրիգորյանի ստեղծագործության և հասարակական գործունեության մասին: Այնուհետև ընթերցվեցին բազմաթիվ հիմնարկներից և անհատներից ստացված շնորհավորական հեռագրերը:

Զերմ և սրագին ծափահարությունների տակ խոսք առնելով, հոբելյարը շնորհակալություն հայտնեց, խոստանալով, որ այսուհետեւ էլ ուժ ու եռանդ չի խնայի՝ ծառայելու համար հարազատ Հայրենիքին և հայ յողովրդին:

ՀՈՎԵՑԱՀԱՅՑ ԹԱՅՏՐՈՒ 40 ՏԱՐԻՆ. — Վերջերս Երևանի թատերասեր հասարակայնությունը նշեց սովորական արդյունակ 40 տարին:

1920 թվականի դեկտեմբերի 30-ին պետականացվում է Երևանի անհատական դրամատիկական ստուդիան, որից հետո սկսվում է թատերական եռունիքներ: Հետաքրությունը են հին արժեքեալոր և նոր պիտուններ: Հետաքրությունը է, որ սկզբնական շրջանում թատերական նախաձեռնությունը գալիս է շրջաններից (Դիլիջան, Լենինական, Կիրովական), մինչև որ լուսավորության ժողովրդական կոմիսարիատի կողմից երևան

է Հրավիրվում Ամո Խարազյանը, Նա Երևանում կաղմու է իր խոսքը, Այդ արդեն հիմնադրումն էր Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոնի Երևանում:

Նորաստեղծ թատրոնի առաջ խնդիր էր գոված՝ գառնալ աշխատավոր ժողովրդի հոգինոր ստեղծարար ուժերի գարգացմանը նպաստող մշակութային կարոր մի լծակ, ստեղծել հայ ժողովրդի մեջ թատերական նոր մշակույթ և ավանդություն, դաստիարակել առողջ հայրենասիրություն, աշխատանքի սեր, նվիրվածություն։ Այդ անելու համար ձևռնարկվեց ներքրավել բոլոր արամադրելի մասնագետներին Սովետական Միությունում կամ արտասահմանում։ Կոչ արքեց գերասաններին՝ հավաքվել Հայաստան և լծիկ աշխատանքի։ Իր հերթին Հայաստանի կառավարությունը 1921 թվականի հոկտեմբերի 26-ին հրատարակեց մի գեղեն «Գրական-գեղարվեստական աշխատավորների ապահովության մասին», որը լայն հնարավորություններ էր ընձեռում գերասաններին լիիրավ ապրելու և ստեղծագործելու համար։

Այժմյան կազմակերպվածությամբ և իրեն ռեժիպութիկական թատրոն՝ Սունդուկյանի անվան թատրոնը գոյություն առավ 1921 թվականի օգոստոսի 16-ի որոշումից հետո միայն։ 1922 թվականի հունվարի 25-ին, չորեքշաբթի օրը, Հանդիսականների խանդավար բազմության ներկայության, տոնական հանդիսավորությամբ, առաջին անգամ բարձրացավ Երևանի պետական թատրոնի վարագսւյրը՝ ներկայացնելու համար անման Սունդուկյանի «Փեպո»-ն։

ԿԱՌՈՒԴԻՌ Վիլլյամ Երեկաննությունը՝ վերջերս Երևանում հյուր էր իտալացի երիտասարդ երգիչ և կինոդերասան Կլաուդիո Վիլյան։ Սովորական Միության տարբեր քաղաքներում ունեցած հաջող ելույթներից հետո, իտալացի տաղանդավոր արվեստագետը, իր իտալական և մերսիկական երգերի թովիչ կատարմամբ, մայրաբաղարի երաժշտասեր հասարակականության գեղարվեստական անխառն հաճույք պատճառեց։ Նա հանրաժանոթ երգիչ է միշագգային համբավով և արժանացել է բազմաթիվ արծաթ և սոկի մելազների։ Կ. Վիլյան ամենուրեք լսվել է հաճույքով և մեծ հիացմունքով։

